

իւր անկամ ծառերի հետ որ զիտէ երկար համբերել և խմատութեամբ ու սիրով հոգ տանել մինչև ցանկալի պառզ կը ստանայ: Բանի քանի մարդի ծանաչում ենք պատմութիւնից կամ մեր առօրեայ փորձերից որոնք սկզբում ոչինչ չէին խոստանում որոնց ընթացքը վատ ապագայ էր գուշակել տալիս: Բայց հանգամանքները փոխուեցան: Աստուծոյ մտար այնպիսի մի նոր օգտութիւն տրուեց նոցա կեանքին որ օրինակելի անձնաւորութիւններ հանգիստեցան՝ օգտակար շրջապատող մարդկութեան և հաճոյ երկնաւոր ծիրոջ: Ո՞վ կարող է տեսնել մեզինք որ մէկի համար ինչ է պահած: Մենք իրաւունք ունինք այն Աստուծոյ երկայնամտութեան ապահովելու սակայն պէտք է չմոռանանք երբեք որ այնուամենայնիւ պաղտաւ ծառը միայն կեանքի արժանի է իսկ անպառնկելի առաքար առ արմին կայ որ կայնամիտ և անաչառ Դատաւորը մի տարի կրկու տարի— հարիւր տարի սպասել կարող է բայց երբեք չի կանէ: Իւր գաղափարներ և վախճանը որոշ է— «հասանի և ի հուր արկանի»:



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԵԿՑՈՒ-
ԹԻՒՆԸ ԳԱՆՆԱԿԱՐՆ ՎԷՃԵՐԻ ՄԷՋ ԵՒ ԲԱՐ-
ԳԷՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ:

Ընթերցողներէից շատերը գուցէ այս վերնագիրը կարգալիս՝ կրկին գաւառական վիճերս պէտք է բացականչեն դժկամակութեամբ և առանց յօգուածի բովանդակութեանը նաշելու շրջին թերթերը այնչափ մեծ է մեզանում նախապաշարումը այսպիսի խնդիրների նկատմամբ: Կարիք կայ սակայն այն հասարակ ճշմարտութիւնը նորից պարզարանելու թէ տարրեր բան է նոր վիճեր յարուցանելը և տարրեր՝ դարեր առաջ կրած վիճերն իրեն պատմական երեւոյթ քննութեան առնելը: Յիրաւի ակաւր յիշողութիւններ շատ կան որոնք իրաւունք են տալիս մեզ խորշելու գաւառական վիճերից բայց ուրանալ չենք կարող որ նոքա ահագին դեր են

խաղացել մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ և այդ պատմութեան բաղմոթիւ ԼՅԵՐՐ մութ կմնան մեզ համար եթէ նոցա ծագման և տարածման պարագաները լուրջ ուսումնասիրութեան առարկայ չգարձենք: Հայոց եկեղեցւոյ առաջին մասնակցութիւնը գաւառական վիճերի մէջ մենք Բարգէն կաթողիկոսի տնտես հետ ենք կապում: Հնայնով որ ընդհանուր եկեղեցւոյ ծոցում ծագած վիճերը առաջ ևս մեր հայրերի ուշադրութիւնը գրաւել են և անհետանք չեն անցել մեր եկեղեցւոյ կազմակերպութեան համար որովհետեւ վերջինս իրօք այդ ժամանակ միայն ելնում է հանդիսատեսի վիճակից և պայքարի մէջ մանուս ինչպէս յայտնի է այս նշանաւոր քաղաքիկոսի հետեանքն կրաւ բաժանումը արեւմտեան քոյր եկեղեցիներէից ուստի և խօսել սորա մասին կնշանակէ մեր եկեղեցւոյ պատմութեան ամենակարեւոր կէտը շօշափել կամ որոնել այն դարադրութիւնը որով այդ պատմութեան երկու զլխաւոր շրջանները բաժանուում են միմեանցից: Իսկ մեզ համար անտարրեր բան չէ անշուշտ թէ երբ և ինչ հանգամանքներում յառաջ եկաւ այն շարժումը որով մեր եկեղեցին ելաւ միս եկեղեցիների բոնած շաղկից և մաքառումն սկըսեց իւր ինքնուրոյնութիւնը պահպանելու և ձեւակերպելու համար:

Այս մասին մեզանում վաղուց ի վեր հաստատութիւն գտած և մի գրքից միւսն անցնող տեղեկութիւնն այն է որ Բարգէն կաթողիկոս 491 թ.-ին մի ժողով է գումարել Վաղարշապատում և նշոյթիլ Բաղկեդոնի ժողովր՝ անխորտակելի անջրպետ հաստատելով այսպէս և իւր յայն— հռովմէական եկեղեցւոյ մէջ: Մենք առաջ ևս այլ և այլ պատմական փաստերի վերայ հիմնուելով խիստ կասկածելի էինք համարել այս տեղեկութիւնը իսկ այժմ մի հարեանցի ակաւրի Արարատի տնցեալ և այս համարում լոյս տեսած թղթերի վերայ բաւական է համոզելու թէ պատմութիւնը բոլորովին ուրիշ ընթացք է ունեցել քան կարծում էինք: Աչքի ընկնող տարբերութիւններն այսանկ երեք են. ժողովը գումարուել է Ա) Դոմինում և ոչ թէ Վաղարշապատում: Բ) Կաւառի թագա-

ւորութեան ժԸ. տարին որ ասել է 506 թ.-ին, և ոչ 491-ին, Գ) եթէ ոչ բացառապէս դոնէ պիտուորապէս նեստորականութեան և ոչ քաղկեդոնականութեան մասին զձիւ կայացնելու նպատակաւ: Արդ որչափ ստոյգ են այս անդեկութիւնները միւսի հետ բազմաթիւ և ի՞նչ է հետեւում նոցա ստուգութիւնից: Առնենք նախ ժամանակի խնդիրը:

Որչափ պիտենք՝ առաջին անգամ Զամ- չեանն է այս ժողովի համար 491 թ.-ը որո- չելի բայց ոչ նա և ոչ նորա հետեւողները որ և է հիմք են ունեցել այսպէս ընդունելու: Առհասարակ Բարգէն կաթուղիկոսի և նորա անմիջական նախորդների ու յաջորդների մա- սին մեր ունեցած ժամանակագրութիւնը չա- փազանց շփոթ է և այն թուանշանները որ մինչև այժմ դործ են դրուել այն շրջանի համար՝ գրեթէ բոլորը կամայականօրէն են կազմած կամ առանց օրինաւոր ընտրութիւն անելու առնուած իրար հակասող պատմական յիշատակութիւններից: Վերջերս Հ. Բ. Սար- գիսեան փորձել է իւր «Ըննագատութիւն Եով- հան Մանդակունոյ և իւր երկասիրութեանց վերայ» գրքի մէջ Եովհան Մանդակունոյ մահուան տարեթիւը որոշելով՝ ձգել նաև նորա յաջորդի կաթուղիկոսութեան տարիները * բայց նորա ձեռքի տակ եղող միակ հաս- տատուն թուանշանը նոյն մեր թղթի մէջ յիշուածն է, մինչ միւս բոլոր արուեստա- կան թուերը որ նա յայտնի պատմութեան և անյայտ «հին և վաւերական (Վ)» յիշատա- կարանների ցուցումներից մեծ աշխատու- թեամբ և սրամտութեամբ հանում է՝ զժրող- դարար ոչ մի կուսան չունին: Նոցա արժէքը ցոյց տալու համար բաւական է յիշել թէ,

ինչպէս է գտնում Հ. Սարգիսեան Գիւտ կա- թուղիկոսի մահուան տարին: Փարպեցու պատ- մութեան մէջ տասն է, որ Գիւտ կաթուղի- կոս յարաբերութիւն է ունեցել ի միջի այլոց Եովհան Լեւոն կայսեր հետ: Սերէոս Լեւոնի թագաւորութեան սկիզբը գտնում է Պերոդի իշխանութեան քսանհինգերորդ տարին կամ 482—484-ին. և ահա եզրակացութիւն՝ ու- ընմն Գիւտ կենդանի էր 483—484-ին մի տարի ևս հոշունք նորա ծիրքին դնալն ու վերադառնալը՝ ուրեմն նա վախճանու եցաւ 485 թ.-ին: Զորք ջանք, անօգուտ վաստակ Լեւոն թրակացի կայսրը միանցյալսան ձնաւ որութիւն չէ, որ նորա իշխանութեան տարիներն ստու- գելու համար Սերէոսի օգնութեանը դիմելու հարկ լինի. առաջին պատահած պատմու- թեան դասագրքի մէջ կարելի է գտնել, որ նա թագաւորել է 557 թ.-ին և վախճանել 474-ին. ուրեմն Գիւտ կաթուղիկոսի նորա հետ ունեցած յարաբերութեան մասին կա- ընելի է ասել միայն, թէ 474 թ.-ից յետոյ լինել չէր կարող: Դակ թէ Գիւտ 484—485 թ.-ին կաթուղիկոս չէր * այդ բոլորովին պարզ է Փարպեցու պատմութիւնից, որի հա- մաձայն Վահանի ապստամբութեան միջոցին կամ 483 թ.-ին կաթուղիկոսական աթոռի վերայ արդէն Եովհան Մանդակունին էր նըս- տած. և եթէ ընդունենք իսկ, թէ նորանից ա- ռաջ Բրիտատիոր կաթուղիկոս չի եղել, ինչ- պէս եզրակացնել կարելի էր յիշաւի թոմար Արծրունու պատմամիջոց՝ այնուամենայնիւ Գիւ- տի աթոռնից լինելուց յետոյ մինչև Վա- հանի ապստամբութիւնը մի քանի տարիներ պէտք է անցած լինին, որովհետեւ Փարպեցին նորա մասին խօսքը վերջացնում ու յետոյ դեռ նոր սխտում է պատմել, թէ ինչպէս Վահան Պարսից գուսն է գնում վերադառնում իւր ուրացութեան համար հալու մաշ լինում: Այս- պիսով Հ. Սարգիսեանի ինչպէս Ե. Մանդակու- նու կաթուղիկոսութեան առաջին տարին 485

* Վենետիկ, 1895, եր. 19 շ. Հ. Սարգիսեանին ծանօթ են Բարգէնի կեկին թղթեր Վենետիկ Մխիթարեանց Բ. 55 ձեռագրից, զոր յամեն 1851 ընդօրինակած է Հ. Բառնարաս Եսայեան ի Հոգով՝ Անտոնեան Խոջ բոլո- չիւ մասնակէ, որ գրուած է ի Բ. Հ. Պեժ. ի Հոսմկաւ: Այս թղթից երկրորդ անգամահամ է համարում մա- այն օրաձանաւ, որ Բարդիգանի ժողովը յիշուած է աշ- տիւ, որ Վարդ իբրեւ մարզպան է յիշուում եւլն. Հեա- տիւր է՝ որեկոյն գիտեմք, թէ Վարդ «յամին 511 հաղի ուրեմն յաջորդեց Վառնանայ»:

* Վենետիկի կորոյ եր լինելը որովհետեւ ամենեւին նիւթ չկայ երբեք, թէ մա մայն իսկ արտից զեկու- լու տարին մնաւ, մինչ Փարպեցին տաւմ էր Պարսիսա- նից վերադառնալուց յետոյ՝ «իկեկաւ աւաւերապիս պա- տուրք իսկ գտաւ ինն ի Հայս հանգիւր երկայն ծերու- րեանք»:

Թ.-ին զնեյու համար բերած փաստերն անհիմն են: այնպէս և անցոր են մահը 498—99 ի զնեյու համար բերածներէից մի քանիք: Տիկարի արձանագրութեան մէջ «Ահա հան» անուն չի կարգացուել: այլ «Մանան»: Սահակ կամարական անհրաժեշտ չէ որ Փարպեցու յիշած Արշաւրի որդի Սահակը լինի (թէ և Բարգէնի թղթի մէջ նորա անունն յիշուելը նոր ոյժ է տալիս այս կարծիքին): Իսկ Յովհանն կարող է լինել Յովհաննէս Բ. Դարեղեցիին († 573 թ.-ին): Այն Յովհանն օրին յիշում է Փարպեցին իւր թղթի մէջ՝ անանգի է Մանգակունտն համարել: այսպիսի մի նշանաւոր կաթուղիկոսի ով եղածը որոշելու համար հարկ կ'ընէ մի թէ «Դիւտայ կաթուղիկոսի եղբորորդին անուանել նորան»: նա ինքն արդէն իւր անունով պէտք է յայտնի լինէր և այնքան հեղինակութիւն ունենար որ մի վանահայր նշանակելու համար պատգամաւոր չդառնար մարզպանի մօտ և նորանից յանդիմանութեան խօսքեր լսէր: Շատ կարելի է Մանգակունտին մինչև Ե դարի վերջը և նոյն իսկ Զ.-ի սկզբի տարիները կաթուղիկոս է եղել: բայց մենք ոչ մի հաստատ տեղեկութիւն չունինք այդ մասին՝ չգիտենք արեւմտեան թէ երբ յաջորդեց նորան Բարգէն: Ժամանակագրութեանց մէջ յիշուած տարիները ոչ մի կշիռ չունին այս գէպում և միայն այն ժամանակ կարող են ի նկատի առնուել: երբ բուն պատմական տղբիւրներ մեզ միջոց են տալիս ստուգելու նոյա արձեւքը: Մ'տւում է որ արեւմտեան թաղականակալ այն յիշատակութեամբ թէ Բարգէն կաթուղիկոս ժողով է դումարել Սաւաթի թաղաւորութեան ժԼ. տարին: Այդ տարեթիւը հաստատում է նաև մեր ձեռագրների մէջ դանդաճ հայոց ժողովների ամենից համառօտ հին և արժանահաստ պատմութիւնը: օրի հեղինակին Բարգէնի թղթերը հաւանականօրէն ծանօթ են եղել: «Ե. ժողով արար Տէր Բարգէն ի Քաղաքաւորաշտի ի ԺԼ. ամի Սաւաթայ Պարսից արքայի վասն Ափսիայ և Բարձու մայր օրք Նեստորի աղանդին տալիսն ին զարեւելեայնս որ և գրեաց թէ մի խոտորիք ի բանից նոցա: զի մեք ամենեքեան հաստատեալ ենք ի մի ուղիղ հաւատ՝ յիշեք հայք: վիրք և աղուանք:

և այս է յաւաքս Զենոնի և Անաստասայ ուղղափառաց: Պէտք է ենթադրել ի միջի այլոց թէ այսանց յիշուած «քաղաքաւորաշտ» խօսքն է շփոթեցրել ուշ ժամանակի պատմագիրներին: որոնք արամազիւր էին այդ անունն ներքոյ աւելի վաղորշապատ քան Դուին հասկնալու: մինչդեռ պատմական տեղեկութիւն ունենալով որ արդէն Դիւտ Դուին էր փոխադրել կաթուղիկոսական աթոռ: այդանց կատարուեցան վահանի յաղթութեանց աստիճանք թիւնները: այդանց արեւմտեան և աւելի յարմարաւորութիւն կար եկեղեցական ժողովի համար: Սակայն Բարգէնի ժողովի ժամանակն աւելի պարզ կ'լինի երբ նորա նպատակն ի նկատի ունենանք և արտաքին պատմութեան միջոցաւ ստուգենք: թէ ինչ հանգամանքների շնորհիւ նա յառաջ եկաւ:

Մենչդեռ յայտնի է 431 թ.-ին Եփեսոսի տիեզերական օ. ժողովով Նեստորական ուսումը բանադրուեցաւ և նորա հետեւողների գէմ հալածանք սկսաւ: այնուհետև Հռոմէական պետութեան մէջ: Սակայն սոցանից շատերը յանձն առնելով նոյնել Նեստորին՝ անվրտանգ մնացին և շարունակում էին գաղանի գործել: ժանտաւանդ Քաղկեդոնի ժողովից յետոյ ծագած խռովութիւնների շնորհիւ նոյա աւելի ոյժ ստացան և մինչև հետո արեւելք տարածեցին իրենց ազդեցութիւնը: Նոյա զիսաւոր կեդրոնն էր Եգեփաթ: ուր նշանաւոր աստուածաբանական դպրոց կար և Նեստորի աշակերտակից ու զաղափարակից իրաւեպիսոյոսի շուրջը ժողովուել էին նոյա համախոհները: Զենոն կայսրը 484 թ.-ին փակեց այդ դպրոցը և նեստորականներին հալածեց պետութեան սահմաններից: * Սքաւապոստան գտնելով Պարսկաստանում՝ կեդրոն ընտրեցին Մծրինը: օրի եպիսկոպոսն էր մինչև 489 թ.-ը և նեստորականների ամենից աչքի ընկնող ներկայացուցիչն ու գործիչը Բարձու ման: Այսանցից նեստորական ուսու-

* Պէտք է ի նկատի առնել որ Բարգէնի ու քոյի մէջ յիշուած Պերսիկ Ե. տարին երբ ցենսրախմբութիւնը պարսիկ վրանների անկող՝ մոտ է գործել Պարսկաստանում՝ միջոց համապատասխան է այս քոյին:

մը տարածուեցաւ զէպի Պարսկաստանի բոլոր կողմերն և կարճ միջոցում այնչափ զօրացաւ որ 499 թ. ին Բարեհոս եպիսկոպոսը մի քանի հաւնուր ժողով գումարեց Սելեկիայում և բնգունեց այն իբրեւ պարսկական եկեղեցւոյ դաւանութիւն։ Ակակիոսը որ Բարձումայի հետ զոյգ յիշուում է իբրեւ նեստորականութեան առաջնորդ՝ Սելեկիոյ եպիսկոպոս էր։ Բարեհոս նախորդը և մեռաւ 498 թ. ին։ Նա մի ժամանակ Բարձումայի հակառակորդն էր եղել և Կ. Պոլսում զանուկելով՝ հերքել էր նաեւ հրապարակաւ իւր կապը նեստորականների հետ։ Բայց իրօք ամէն կերպ նպաստել էր նեստորականութեան զօրանալուն իւր հօտի մէջ և նախապատրաստել այն զրուածիւնը որ հաստատուեցաւ Սելեկիոյ ժողովում։ Ուստի այս ժողովը որոշեց մոռացութեան ապ նորա վէճը Բարձումայի հետ և ծանաչել երկուսին ևս հեղինակաւոր վարդապետներ նեստորական եկեղեցւոյ։ Այդ է հաւանականաբար պատճառը որ նոցա անունը միասին է յիշում։ Իսկ Ակակիոսին առաջնակարգ ազանդաւոր համարելուն շատ նպաստել է անշուշտ նաեւ այն հանգամանքը որ մի բնութեան վարդապետութեան պաշտպանների մէջ մեծ հեղինակութիւն վայելող Փիլոքսէն Նարեկի զիանական եպիսկոպոսը եռանդուն բանավոր է վարել նորա զէմ և բաղմամբ զրուածներով երևան հանել նորա մոլորութիւնները։

Այսպէս ուրեմն Բարդէն կաթողիկոսին զիմոյ ու Հայոց եկեղեցւոյ պաշտպանութիւնը խնդրողները Պարսկաստանի այն քրիստոնեաներն էին որոնք Սելեկիոյ ժողովից յետոյ այդ ժողովի վճիռներին համակրպել չկամեալով՝ հալածանքի ենթարկուեցան նեստորականների կողմից։ Պէտք է ի նկատի ունենալ որ ժամանակի պարսից թագաւորը՝ Կաւատ սկզբում քրիստոնէութեան հալածող էր։ Բայց 499 թ. ից յետոյ երբ նա երկու տարուայ շափ իրենից խլած գահը կրկին ձեռք ձգեց՝ մեղմ էր վարուում քրիստոնեաների հետ և թող տալիս ազատ պաշտել իրենց կրօնը։ այդպիսի վարմունք կարեւոր էր մանաւանդ յունաց հետ ունեցած պատերազմի պատճառաւ որ 502 թ. ին սկսուեցաւ և տևեց մինչև 506 թ. ը։ Պատերազմի խառն

ժամանակ կրօնական վէճերն ի հարկ է ազատ ստարկեց չէին ունենայ։ մինչնոցա վերակենդանանալը խաղաղութեան հետ շատ բնական էր։ Ուրեմն երկրի քաղաքական գրութիւնից ևս երևում է որ 506 թ. ը շատ յարմար ժամանակ էր այնպիսի մի ժողով գումարելու որպիսին էր Բարդէնի ժողովը Դուինում։ և որ ժողովի իսկական առիթը նեստորական յազումները պէտք է եղած լինին։ Բարդէն կաթողիկոս իրաւունք ունէր ասելու թէ «հոռմք և հայք և վիրք և աղուանք» մի հաւատ ունին որովհետեւ Դուինի ժողովը գումարուեցաւ Անաստաս կայսեր իշխանութեան այն տարիներում երբ ամէն տեղ բացարձակ մի բնութիւն էին ուսուցանում՝ խոսում և հալածում քաղկեդոնականներին։ Զարմանալի չէ ուրեմն եթէ նա Բաղկեդոնի ժողովը նկատում է լոկ իբրեւ նեստորականութեան ոյժ աւուզ մի երեւոյթ մինչ վերջինս բոլոր շարեաց արմատն է և եկեղեցւոյ ալէկոծման բուն պատճառը։ Զենոն կայսեր թուղթը կիւրեղ Ալեքսանդրացւոյ «Երկոտասան գլխոց» հետ իբրեւ ուղիղ դաւանութեան ուղեցոյց ներկայացնելու ինչպէս և հերետիկոսների կարգում թեոգորետիկ Իրատին և Եւտիքէսին նշովելը՝ ստանց Բաղկեդոնի ժողով և Լեոն պապի անուն յիշելու ցոյց է տալիս որ Բարդէն և իւր բնիկները ժողովով որոշել էին Բաղկեդոնի ժողովի նկատմամբ ընդունել այն զրուածիւնը ինչ որ առաջարկել էր Զենոն իւր նշանաւոր հենտոիկոնով աշխինքն հերքել քաղկեդոնականութիւնը՝ չյիշելով ամենեւին նորա և նորա գլխաւոր հեղինակների անունները։ Հաւանականօրէն այդ պատճառաւ և առաջին թղթի մէջ Բաղկեդոնի անունը ամենեւին չկայ։ երկրորդ թղթի «զոր և զբեցաք իսկ ձեզ յառաջագոյն վրաց և աղուանից միարանութեամբ իւրաքանչիւր աշխարհի գրով» խօսքերից պէտք է եզրակացնել որ առաջինը Հայոց եկեղեցւոյ կողմից ուղարկուած այդ պաշտօնական զրուածիւնն է և ուստի պաշտօնապէս ընդունած սահմանից չի ելնում։ մինչ երկրորդը մասնաւոր զրուածն է լինելով կողմնակի կերպիւ արտայայտում է այն հայեացքը որ ժամանակակից հայերն ունէին քաղկեդոնականութեան մասին։ Հայե-

ըր կարող էին Բաղկեդոնի ժողովը պաշտօնապէս նշոված չլինել, բայց ասել երբ տեղը դալիս էր թէ իրենք չեն ընդունում այն՝ նշովել Թէոփրոտին և իրասինս որոնց անունն իրրե նեստորի համարահայեցիկ և կիւրեղ Աղեքանեկոյցոյ հակառակորդներին՝ տակի էր բոլոր արեւելքում։ Նշովել նաև Եւթիքէսինս յոյց տալու համար որ նեստորականութեան և քաղկեդոնականութեան հակառակ լինելուց չպէտք է հետեցնել թէ Եւթիքէսի մնորութիւնն են ընդունում։

Եամենայն դէպս դատանական այն գրութիւնը որ ներկայ թղթերի մէջ ենք գտնում՝ դժուար է հաշտեցնել Ռիստանէսի պատմութեան մէջ պահուած վկայութեանց հետ։ Որովք այս թղթերից դուրս ունենալին տեղեկութիւններն են, ինչքան զիտենք, Բարգէնի ժողովի մասին և որոնց հիման վերայ է կազմուել այն կարծիքը թէ այդ ժողովում առաջին անգամ որոշակի բանադրուել է քաղկեդոնականութիւնը։ Այսպէս՝ Մովսէս կաթողիկոսը կիւրիոնին պրած թղթի մէջ ասում է. «Որ ժամանակս կառատայ արքայից արքայի խնդիր եղև քննութեան հաւատոց և հոռոմք զԲաղկեդոնին ընկալան զհաւատս և մեր աշխարհս և ձեր հրաժարեցին և հեռացան և զեռ ևս գրով կայ և պահի մեր և ձեր միարանութիւն հաւատոյ։ Յոյնը հաստատում է ի միջի այլոց Արրահամ կաթողիկոս իւր երրորդ թղթում՝ մի առ մի թուելով այն վրացի եպիսկոպոսների անունները որոնք վրաց Դարբիւն կաթողիկոսի հետ նշովել են Բաղկեդոնի ժողովն ու Լեւոնի առաւարը։ Սակայն ինչպէս տեսնեք, ժամանակակից պատմական հանգամանքներին համապատասխան չէ այս տեղեկութիւնը, թէ «հոռոմք զԲաղկեդոնին ընկալան զհաւատս»։ Կառատի օրով կատարուած քննութեան հետ նոցա այս կամ այն հաւատ ընդունելը չէր կարող կապուած լինել և մենք ամէն պատճառ ունինք հաւատալու Բարգէնի և վերև յառաջ բերած յիշատակարանի խօսքերին, թէ հայերն այդ ժամանակ ընդհակառակն վրացոց և աղուանից հետ յոյների մեծամասնութեանն ևս իրենց դաւանակից էին համարում։ Դժուար է որոշակի ասել թէ ի՞նչն էր բուն

առիթը Բարգէնի օրով հայոց վրացոց և աղուանից միասեղ զալուն և մի ընդհանրական մեծ ժողով կազմելուն։ Կարելի է յուշական եկեղեցւոյ մէջ տիրող քաղկեդոնական յուզումներն ու Զինոն կայսեր հրովարտակն առանձին զեր էին խաղում այդտեղ, բայց քանի որ Բարգէնի թղթերի մէջ, ինչպէս յիշեցինք, նեստորականութիւնն է առաջին տեղը բռնում՝ մենք աւելի իրաւացի ենք համարում վերոյիշեալ յիշատակարանի վկայութիւնը, թէ այդ ժողովը գումարուել է յաւկապէս «վասն Ակակայ և Բարձու մայ»։ այսինքն այն վէճերի պատճառս որ պարսից իշխանութեան ներքոյ եղող քրիստոնեաներին էին յուզում— Հարկաւ որ էր որ կաւատի հպատակ իրար հարեան քրիստոնեայ աղգերը մի միահամուռ վճիռ կայայնէին, թէ ինչպէս պէտք էր վերաբերուել դէպի այն դաւանութիւնը որ հաստատութիւն էր գտել պետութեան մայրաքաղաքում և ահա նոքա ժողովում են հրաւիրում են միանալու իրենց նաև հեռաւոր պարսկական նահանգներում նախնեաց աւանդութեան հաւատարիմ մնացած հաւատակիցներին և որոշում են նշովել նեստորականներին՝ արդեւ լելով ամէն հաղորդակցութիւն նոցա հետ։ Եթէ այդ առիթը խմբագրուած «հաւատոյ միարանութեան զիրն» նոյնպիսի բովանդակութիւն ունէր, ինչպէս «առ պարսս ուղղափառ» ուղղած Բարգէնի առաջին թուղթը, մնում է այն ժամանակ ասել որ Մովսէս և Արրահամ կաթողիկոսները կողմնակի կերպով միայն եզրակացնում էին նորանից, թէ Բաղկեդոնի ժողովը բանադրուել է այնտեղ և նոյն այդ հանգամանքն էր ոյժ ապիւս կիւրիոնին համարձակօրէն խօսելու նոցա հետ և Բաղկեդոնի մասին լուր կամ խօսքը նեստորականութեան վերայ դարձնելու։

Մեր վերջնական եզրակացութիւնն այս բոլորից յետոյ այն է, որ ընդհանուր եկեղեցւոյ մէջ յարուցուած դաւանական վէճերն չայոց եկեղեցւոյ համար կենսական խնդիր են դարձել առաջին անգամ այն ժամանակ, երբ նեստորականութիւնը Պարսկաստանի կեդրոնում ճանաչուել է իրրե ուղիղ դաւանութիւն և նորա հետեւողներն սկսել են ձգտ-

տու՛մ ցոյց տալ թողոր պարսկահայաստանի քրիստոնեաներին իրենց դատնութեան ընդհանուր սյուստութիւն մի մեծ ժողով է գումարուել Դուինում 506 թւին Բարդէն կաթողիկոսի նախագահութեամբ և վրաց ազատներից ուղղափառ պարսիկների մասնակցութեամբ որտեղ բանադրուել է Պարսից ընդունած նկատարականութիւնը իւր զլխաւոր ներկայացուցիչներով՝ Ակակիոս Բարձումաս Բարեոս և յիւ Զենոն կայսեր հնկտոխիլոնն իրեն ուղղափառ դատնութիւն է ծանաչուել և ըստ այսմ Բարդէոսի ժողովը պաշտօնադրուել է ընդհանուր ընկերացի ընկերացի համարուել է քաղաքիկալ նկատարականութեան ծնունդ աւելնն խոսակի ուղղափառ քրիստոնեաների համար թէ երբ է տեղի ունեցել պաշտօնական բանադրանքը՝ այդ մասին յետոյ:

Կ. Վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

С. Петербургскія Вѣдомости թերթի 271 հում մի գաւառական թղթակից առանձին ուշադրութեան արժանի մի ընդարձակ յօդուած է նուիրել այն հարցին. թէ ինչ միջոցներով են մաքառում այժմ Ռուսաստանում աղանդների դէմ և թէ որն է տեղի կողմն այդ մաքառման. «Ռուսաստանը միշտ հպարտացել է հաւատոյ խնդիրներում ցոյց տուած ներդաճութեամբ ուղղափառութիւնը հեռու է եղել միշտ մոլեռանդութիւնից և բռնութիւնից. այսպէս է սկսում նա իւր յօդուածը— և սկզբունք գնելով որ չգաղափարների ուղղաճութեան նկատմամբ հաւատալիքների դէմ կռիւր կարող է և պէտք է լինի միայն կախ հոգւոյ աշխարհի և ոչ երբեք նիւթական ոյժի սահմաններում. քրեական պատիժների և օստիկանական ձեռնարկութեանց միջոցաւ և ցոյց է տալիս փաստերով որ աղանդները և հերձուածները զարգացել և զօրացել են աւելի այն ժամանակները երբ ամենախիստ միջոցներ են ձեռք առած եղել նոցա դէմ և ամենասոսկալի տանջանքներով նեղել աղանդաւորներին մինչ ընդհակառակն մեր դարում. երբ կառավարութիւնը թէ եկեղեցին սկսել են մեղմութեամբ վերաբերուել քաղաքներով հրապարակական վիճարանութիւններով նոցա հա-

մոլմունքի վերայ ազդել և ամեն մի փոքրիկ շեղում ձիւսակառարութեանց մէջ իրեն մեծ յանցանք և եկեղեցւոյ բաժանում չնկատել՝ նոցա եռանդն ու գործունէութիւնը ամեն կերպ պակասել է. «նիւթական բռնութիւնը սխալ մտքերով կուրացած մարդուն աւելի է համոզում թէ այդ մտքերի մէջ անպարտելի ճշմարտութիւն կայ թէ նորա համար միայն հալածում են նոցա քաղաքական և գաղափարական խիստ միջոցներով որ խոհականութեան փաստերով հերքել չեն կարող. Էստ աղանդներ յառաջ են գալիս բարոյական պահանջների հոգեւոր անունի կարիքից. երբ այդ պահանջներին ուղիղ ծանապարհով բաւականութիւն չի տրուում՝ մարդիկ կամայ ակամայ կողմնակի ծանապարհներ են ընտրում. «Զուր տեղը չէ որ ժողովուրդութիւն արեցութիւնից համեստ կեանքս խօսքի զգաստութիւնս ընկերական օգնութիւնս— ուս աղանդաւորների սովորական յատկանիշներն են որոնք և ամենից աւելի են նպաստում նոցա տարածուելուն. Իսկ այս թողոր բարոյական սովորութիւնները իրեն քրիստոնեական կեանքի պարտաւորեցուցիչ կանոն պահանջուում են նաև ուղղափառ եկեղեցւոյ կողմից. Ինչո՞ւ արդեօք նորա արմատ չեն բռնում մինչև այժմ ժողովրդի մէջ. որ սրբութեամբ պահում է ուղղափառութիւնը. Դեպք է ուրեմն ամեն ջանք գործ դնել հոգեւորականութեան մէջ կրօնական եռանդ և բարոյական ոգի զարգացնելու. որ խօսքով և օրինակով ճշմարտութեան բարութեան անպիմութեան ուղեցոյց լինի նա՛ այն ժամանակ աղանդներն իրենք իրենց կանխատանս ապա թէ ոչ. իրականութեան առաջ աչք փակելով և թող տալով որ ժողովուրդի մի ահագին գուցէ բարոյապէս աւելի զօրեղ մաս իրեն վարակուած բանակ նկատուի՝ կնշանակէ այն տեղը հասցնել որ համազգային ժայռից մի խոշոր հատուած կտրուի ընկնի իսկ այդ առանց ուժգին ցնցման չի լինի. «Այն մարդիկ որոնք բռնութեան երկրիցից կամ նիւթական շահերի ցանկութեամբ իրենց հաւատքը փոխում են՝ ամենաթող և բարոյապէս անակ մարդիկ են. այդպիսի մարդկանցով կարծեցեալ կողմնակիցների թիւը բազմացնելն ոչ մի կրօնի ներքին ոյժը չի աւելացնում. այլ թուլացնում է և ևս սակայն հակառակ մեր կողմնակալութեան մարդասիրական հայեացքներին շատերը շարունակում են դեռ հաւատալ անմտաբար ստիպումների ահարկութեան և պատիժների փրկարար զօրութեանը հաւատոյ խնդրում.:

Ապա Արդոյ յօդուածագիրը իւր սեփական փորձառութիւնից օրինակ է բերում մի աղանդաւորի հայեացքն այս խնդրի վերայ. նորա բառացի խօսքերով. «Մենք եկեղեցւոյ դէմ չենք ելնում մենք օղիտան դէմ ենք ելնում. Մեր թողոր մեղքը նորանում է. որ օղի չենք խմում. հարսանիքներին